

Նատար եղաւ : Կրցաւ հոն իր յաջողակութեամբն քիչ կորուստով Տընէլարն բերդին դէմ կռուիլ, ուսկից ետքը կամաւորաց բարձրաստիճան զօրավար անուանեցաւ : Նոյն տարւոյն ապրիլի վեցին ու եօթին Սիրոհի արիւնահեղ պատերազմաւ յաղթեց Պէօրըկարա զօրավարին : Ետքը յաղթական բանակովն վազեց հարաւային տէրութեանց վրայ, և առանց ընդմիջելու ետևէ ետև շատ մը յաջող պատերազմներ մղելով, քաջասիրտ և յամառ պատերազմէ մը ետքը Վիքսպուրկ բերդը 'ի յանձնաարութիւն ստիպեց, և այս փառաւոր յաղթութեան արդիւնքն եղաւ 30 հազար դերի, 218 թնդանօթ, 35 հազար հրացան և Միսիսիբի գետին տիրապետութիւնը որ վաճառականութեան կարևոր դուռ մի է :

Այս յաղթութենէն ետքը Կրանդ կանոնաւոր զօրաց բանակին մէջ բարձրաստիճան զօրավարի պաշտօն ունեցաւ : և նոյն պաշտօնիւ առաջ տանելով յաղթութեանց ընթացքը, շատ տեղերէն ապստամբները հալածեց : Հարիւր քաղաք իրեն շնորհակալութիւն մատուցին, և Լինքըլն նախագահին առաջարկութեամբ, 1864ին մարտի 2ին զինուորական պատուոյ ամենաբարձր աստիճանը բարձրացուցին զինքը, այն է տեղակալ զօրավար, և նոյն ամսոյն 10ին Միացեալ Նահանգաց բոլոր զօրաբանակին ծայրագոյն հրամանատար անուանեցաւ : և ահա երեք տարուան մէջ խաղախորդութեան հաշուէգիրք բռնող անձն զինուորական պատուոյ ծայրը հասաւ :

Հիմա Կրանդ հասարակապետութե նախագահ է :

ՎԱՅՐԵՆԻ ՁԻՈՑ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ  
Ի ՄԵԿՍԻԿԱ

Որսորդները բլրան մը վրայ ելան, ուրուն գազաթէն իրենց դիւրին էր տեսնել հորիզոնին վրայ կենդանեաց ան-

թիւ բազմութիւն մը, նկարագեղ կերպով հաւաքուած, և ամենեին անկա սկած իրենց սպառնացող վիճակին : Մեկ սիկացիք մէկէն ձևացուցին վայրենի ձիերու մեծ շրջանը, ինչպէս որ կը կոչեն : այսինքն, ամենէն ճարտար ձիաւորներն ամեն կողմ ցրուեցան, մէկմէկէ չափաւոր հեռաւորութեամբ, մեծ բուրակ մը ձևացրնելու կերպով :

Երբոր պատրաստութիւնները լմրեցան և որսորդները ցրուեցան, ամենքը ձիերնէն իջան, զանոնք ետևնէն տանելով, և բարձր խոտերուն մէջ մտան բոլորակը աւելի պլտիկցրնելու համար :

Վայրի ձիերն որ մինչև այն ատեն հանգիստ կը ճարակէին՝ գլուխնին վեր վերուցին, ականջնին տնկեցին և սկսան խրխնջելով օդը շնչել : Յետոյ շատ մը մէկ տեղ ժողուելով խիտ շուկ մը կազմեցին, և սկսան երթալ հանդարտ ընթացքով դէպ 'ի բամբակենեաց անտառ մը՝ գետի մը եզերք :

Այն ատեն որսորդութիւնն սկսաւ : Վեց որսորդ աղէկ հեծած՝ յարձրկեցան բոլոր ուժով վայրի ձիերուն խրմբին առջև, անոնց գլխուն վրայ սուլեցրնելով իրենց ճօպանները : Ձիերն զանոնք տեսնելով զարհուրած ճամբանին փոխեցին աճապարանօք : վախով խրխնջելով, և ուրիշ ճամբէ մը փախան : Բայց ամէն անգամ որ որսորդներուն շրջանակէն անցնիլ կը փորձէին, ձիաւորներն իրենց մէջտեղը կը յարձրկէին, և զիրենք կը ստիպէին ետ դառնալու :

Երբոր այս գործողութիւնս երկայն ատեն տևեց և ձիերն սկսան կատաղութենէ կուրանալ, նշան մը տրուելով շրջանակն մէկ կողմէն բացուեցաւ : Ձիերը խուռն դիմեցին որոտման թաւալման ձայներով դէպ 'ի այն մուտքը՝ որ իրենց առջևը բացուած կ'երևար, ընդոտնելով ամեն արգելք որ իրենց դէմ ելնէր : Բայց որսորդներն ալ ասոր կը սպասէին : որք ճարտարութեամբ զանոնք քշեր էին դէպ 'ի կրծի մը բերան, երկու բաւական բարձր լեռանց միջոց, որուն բերանը որսորդք 15 ոտք բար-

ձրութեամբ ցիցերով շրջափակ մը ձևացած էին, ցիցերը գետնի մէջ խոթելով և ոլորած կեղեկ շուաններ մէկմէկու կապելով: Չիբրը խմբովին այս շրջանակին մէջ յարձրկեցան, առանց քննելու և առանց իսկ տեսնելու, և բոլոր շրջափակը լեցուեցաւ: Այն ատեն որսորդներն առանց վախի յարձրկեցան անոնց դիմացը, և հանդերձ կենաց վտանգաւ արդիւնցին զանոնք, մինչդեռ ուրիշներն ալ շրջանակը կը փակէին: Գրեթէ 1,500 գեղեցիկ վայրի ձիեր մէկ հարուածով բռնուեցան:

Սակայն մեծ կռիւ մը բացուեցաւ կրճին մէջ որսորդներուն և մնացած ջոկատին հետ: Չիբրն այն նեղ միջոցին մէջ փակուած՝ կը ջանային անցք մը բանալ նորէն փախչելու համար: Կը խրխնջային, կից կ'արձրկէին և կատաղութեամբ կը ջախջախէին ինչ բանի որ հասնէին: Շատ որսորդներ իրենց ձիերէն վար ինկան և անոնցմէ կոխկրտուեցան: Բոլոր երիտասարդութեան եռանդեամբ, իրենցմէ մէկը ինչուան ձիոց խմբին մէջտեղը գացած էր, յանկարծակի իր ձին կից մը առաւ՝ որ առջևի որունդը կտարեց չը հեծնելու չափ, և գետին տապալեցաւ վրայի ձիաւորին հետ:

Երիտասարդն կայծակի արագութեամբ շուտ մը ոտք ելաւ, և մտածման պէս երազ՝ բռնելով առաջին հանդիպած ձիուն բաշը, ցատքեց անոր կռնակը և ծնկուրները սղմելով վրան կեցաւ: Ան ատեն զարմանալի բան մը հանդիպեցաւ, չըլսուած կռիւ մը ձիուն և մարդուն մէջ: Ազատասուն կենդանին կատաղեցաւ տեսնելով որ իր կռնակն անպատուեցաւ բեռ կրելով. կը ցատքըտէր, երկու ոտքի վրայ կ'ելլար, կը զայրանար, կը խրխնջար, կից կը զարնէր. բայց ամեն բան անօգուտ էր, ձիաւորն հաստատ կը կենար: Քանի որ կրճին մէջն էր՝ ձին նեղուած իր ընկերաց մէջ չը կըցաւ իր ուղածն ընել իր կրած բեռէն ազատելու համար. բայց հազիւ թէ դաշտին մէջ մտաւ՝ գլուխը վեր վերցուց, ետեւէ ետեւ շատ մը ցատքըտեց

և յանկարծօրէն սկսաւ շիտակ վազել այնպիսի երագութեամբ որ ձիաւորին շունչը կը բռնուէր: Սակայն ասիկա քակեց իր վրճնոցը, և պատրաստեց խաղալու հանդէսին վերջի տեսիլը, որ կը սպառնար իրեն մահուամբը լմրննալու: Չին կռուին կերպը փոխեց, շիտակ կը վազէր դէպ 'ի գետը, կարծես թէ աւելի ուղեւով խղղուելու ձիաւորին հետ քան թէ յաղթուելու: Որսորդները կը դիտէին մեծ հետաքննութեամբ և վախով այս սարսափելի ընթացքին այլևայլ հանդէսները. երբոր յանկարծակի ձին դարձեալ կերպը փոխեց, և երկու ոտքի վրայ ելաւ՝ որպէս զի իր բեռովը կռնակի վրայ թապալուրկի: Որսորդները տաղնապի ձայնով մը կը պոռային: Երիտասարդն ուժով մը ձիուն վիզը փաթթուեցաւ՝ այն վայրկեանին որ պիտի տապալէր, և իր վրճնոցովը անհնարին ճարտարութեամբը ձիուն աչքերը դոցեց: Չին շուտ մը կուրացած, ինկաւ իր ոտքերուն վրայ՝ և այնպէս կեցաւ դողդողալով: Այն ատեն յաղթողն գետին իջաւ, երեսը ձիուն գլխուն մօտեցուց և քրթին ծակերէն փչեց, կամացուկ մը ճակատը քերելով: Այս գործողութիւնս իբրև տասը վայրկեան մը տևեց. ձին կը փչէր և կը խրխնջար առանց համարձակելու տեղէն շարժելու: Մեկսիկացին նորէն ցատքեց անոր կռնակը, հանեց թաշկինակը անոր աչաց վրայէն. ձին ապշած մնաց. նուաճուած էր:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Անտոն Մուրադորի. — Մոտենայի դքսութեան վիլնեօլա ըսուած պզտիկ երկրին մէջ յամին 1680 բաւական բազմութեամբ աշակերտաց պզտիկ դըպրոց մը կար: Օր մը այն աշակերտներէն աւելի պատուահանին մօտ եղողներն՝ երբեմն երբեմն ոտք ելնալով պատուահանէն դուրս կը նայէին. այս բանս վար